ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

Լիլիթ Մինասյան

ՀՀ Լոռու մարզ, Վանաձորի Ակսել Բակունցի անվան թիվ 7 հիմնական դպրոցի ուսուցչուհի

Երևան, Տիգրան Մեծի 67
Հեռ. 033 572100
https://kznakhimnadram.blogspot.com/

Թեման՝ «Հին աշխարհի գրի տեսակներից մինչև ժամանակակից մեդիագրագիտություն»

7-րդ դասարան

Դասի նպատակը

- Ձևավորել Հին աշխարհում գրի կարևորությունը բացատրելու, զարգացման ընթացքը ներկայացնելու և որպես հաղորդակցության կարևոր միջոց ընկալելու հմտություն:
- Զարգացնել սկզբնաղբյուրներից քննադատորեն օգտվելու կարողություն և ժամանակակից մեդիագործիքների կիրառության մի շարք եղանակներ:
- Ձևավորել մեդիայի հանդեպ քննադատական մոտեցում ունեցող անհատ:

Վերջնարդյունքներ

Տարբերակի գրի տեսակները

Նկարագրի գրի զարգացման ընթացքը:

Արժևորի գրի և ժամանակակից մեդիայի դերը:

Գնահատի ժամանակակից մարդու կյանքում մեդիագրագետ լինելու կարևորությունը:

Հ7, Հ11, Հ12

Դասի ընթացքը

Քայլ 1. Ներառում, խթանում

Դասի խայծը՝

Ուսուցիչը սովորողներին ներգարվվում է թեմայի մեջ՝ խթանելով նրանց հետաքրքրությունը, հնարավորություն տալով կռահել, թե ինչի՞ մասին է լինելու դասը:

Սովորողներին ցույց տալ գրային տարբեր համակարգեր իր մեջ ներառող նկար և ժամանակ տալ մտորելու՝

Մուտքի տոմս

- *Տեսնում եմ . . .*
- *Մտածում եմ. . .*
- *Հարց ունեմ. . .*

Քայլ 2. Բացատրում: Մի շարք խորհուրդներ ուսուցչից՝ գործնականից առաջ

Ինչպե՞ս տարբերակել հավաստի տեղեկությունը կեղծից՝

Արդյո՞ք տեղեկությունը տարածում է վստահելի աղբյուր/մեդիա:

Սենսացիոն, սկանդալային հռետորաբանությունը չի ապացուցում տեղեկության կեղծ լինելը, բայց առիթ է առավել զգոն լինելու:

Արդյո՞ք լուրը հիմնավորված է, ներկայացված են ապացույցներ, տրամադրված է լուրի սկզբնաղբյուրի մասին տեղեկություն:

Ինչպե՞ս տարբերել վստահելի լրատվական կայքը

- «Մեր մասին» բաժինի խմբագրության կոնտակտային տվյալների, կազմակերպության մասին հստակ տեղեկության առկայություն
- Արդյո՞ք այս լրատվամիջոցի մասին տեղեկություն կա այլ հարթակներում:
- Սկանդալային, սենսացիոն հռետորաբանության օգտագործում

Մի քանի օգտակար գործիք

Խորացված որոնում Google-ում/ Advanced Search
Նկարի հետադարձ որոնում/ Reverse image search
Տեսահոլովակների որոնում, InVid
Կեղծ լուրերի արխիվ, Snopes.com

Նկար/վիդեո հետադարձ որոնում

InVid - https://bit.ly/30mSCUP
Google image search
RevEye - https://bit.ly/2OgZRrw
Օգնում է գտնել տվյալ նկարը/տեսահոլովակը այլ աղբյուրներում
https://hraparaktv.am/post/dc5f239be362ced52f69d81b972d175b
https://youtu.be/kCktN8oyLsc

Քայլ 3. Գործնական աշխատանք

Դասարանը բաժանել «**հետազոտողների**» և «**բացահայտողների**» խմբերի և տալ առաջադրանքներ՝ հետազոտելու Հին աշխարհի գրային համակարգերը և բացահայտելու դրա զարգացման ընթացքն ու կարևորությունը :

«Հետազոտողների» խումբը ներկայացնում է Հին աշխարհում գրի կարևորությունը, գրի զարգացման ընթացքը՝ օգտվելով տեղեկատվական աղբյուներից :

«Բացահայտողների» խումբը ներկայացնում է գրի՝ որպես հաղորդակցության կարևոր միջոց լինելու փաստը՝ տեղեկատվական տեքստեր և լուսանկարներ օգտագործելու միջոցով:

Քայլ 4. Խմբերը ներկայացնում են՝

1. Մեդիայից դուրս բերված վերլուծական տեղեկատվություն գրի կարևորության մասին:

2. Գրի տեսակները՝ ցույց տալով, որ ժամանակակից մեդիան ուղիղ կապ ունի հաղորդակցության ամենահին միջոցներից մեկի՝ գրի հետ:

3. Ժամանակի շղթայի վրա ժամանակագրական հաջորդականությամբ նշել գրի զարգացման ընթացքը՝ ժայռապատկեր, գաղափարագիր, սեպագիր և այբբենական գիր:

Խմբերը տեղեկատվական աղբյուրներից օգտվելուց դրսևորել են քննադատական մոտեցում ցանկացած տեղեկույթի ճշմարտացիությանը՝ պարզելով այն մի քանի աղբյուրներից:

Քայլ 5. Ամփոփում

Նշել 3 բան, որոնք ձեր համար կարևոր են:

Նշեք 2 բան, որ դուք սովորել եք և կարող եք օգտագործել ձեր առօրյայում:

Նշեք 1 բան, որը կարող եք կիսվել ձեր ընկերների հետ:

Անդրադարձ

Ես փոխեցի իմ վերաբերմունքը. . .

Ինձ հայտնի դարձավ, որ. . .

Ես զարմացա. . .

Ես հաստատեցի կապ. . .

Աղբյուրները

1.Լուսինե Գրիգորյան «Մեդիագրագիտության հինգ հարցեր», «Կասկածիր, համեմատիր, ճշտիր»

2.Մեսրոպ Հարությունյան «Լրագրողական էթիկան գործնականում»

3.Գեղամ Վարդանյան «Լուրը, լրագրությունն ու հասարակությունը»

https://www.hayagitaran.am

https://aybuben.com/st7

http://www.ysu.am/files/02L_Shakaryan.pdf

https://media.am/hy/lab/2020/03/13/17887/

Ծնորհակալություն

- Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում: